կան շրջաններում, շարունակել է միշտ տիրել, յիշեցնելով նրանց ցեղային ծագումը: Բայց ազգային կամ ցեղական վրացական զգածմունք դոյութիւն չունի բոլորովին: Պարզապէս վրացախօս Թուրքեր են նրանք այժմ:

(Շարունակելի:) ՍԱՐՈՒԽԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՆԹԷՈՆՆԵՐՈՒՄ

(Շարունակութիւն:)

ՍԱՐԳԻՍ ԵՊՍ. ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑ
(1810—1879)

Հայկական ճանապարհորդական գրականութեան մէջ կայ «Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան» խորագրով մի գիրք, որ լոյս տեսաւ 1859 թուին: 517 երեսից բաղկացած ստուար մի աշխատութիւն է դա՝ նուիրուած Հայաստանի հնութիւններին, վանքերին, եկեղեցիներին, հինութիւններին եւ յայտնի անձնաւորութիւններին: Գրքի ճակատին գրուած է — Սարգիս Սանահնեցւոյ Ջալալեանց:

*

Թիֆլիսի Մայր եկեղեցւոյ բակում հանդիպում է այս մատենագիրը, որի հողակոյտի վրայ գրուած մեծ սպիտակ մարմար քարի վերեւի մասում փորագրուած է մարմարէ մի աւետարան: Երկու թերթի վրայ կարդում եմ հետեւեալ տողերը.

ԵԿԱՅՔ ԱՌԻՍ Ա ՄԵՆԱՑՆ ՎԱՍՏԱ ԿԵԱԼՔ ԵՒ ԲԵՌ

ՆԱԻՈՒՐՔ ԵՒ ԵՍ ՀԱՆԳՈՒ ՅԻՑ ԸՀ ՁԵՀ

Ներքեւում կարդում եմ միայն երեք տող.

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑ
1810—1879

Մարմար քարը շրջանակւում է զեղեցկահիւս երկաթեայ վանդակապատով.

Այսպէս է, ահա, իր ժամանակին որպէս չինարար եւ դպրոցասէր յայտնի դարձած Ջալալեանի շիրմի պատկերը:

ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
(1849—1904)

«Փորձ», «Արձագանգ», «Armenische Bibliothek» — ահա այն յուշարձանները, որ կերտեց Աբգար Յովհաննիսեան իր կեանքի պատմութեան ընթացքում:

«Փորձ», «Արձագանգ» — դրանք իր ժամանակի լրագրութեան մէջ ուրոյն տեղ են գրաւում, որոնց դրօշի տակ համախմբուեցին պատմաշրջանի գրական լաւագոյն ոյժերը — Ռաֆ. Պատկանեան, Պռօշեան, Սունդուկեան, Պարոնեան, Ծերենց, Գէորգ Բարխուդարեան, Պալասանեան, Ալէքսանդր Երիցեան, Սեդրակ Մանդինեան, Ռաֆֆի, Քաջբերունի, Զմշկեան եւ տուին հայ գրականութեան պատմական, վիպական, թարգմանական, թատերական եւ այլ լուրջ ստեղծագործութիւններ:

—

Աբգար Յովհաննիսեանը, Առեւտրական բանկի այդ վարիչը, շնորհիւ իր գիրքի, կարողացաւ նշանակալից դեր կատարել ոչ միայն դարաշրջանի լրագրական, այլ եւ թատրոնական ասպարիզում: Նրա անունը սերտ կերպով կապուած է նաեւ 1879—1880-ական թուականների Թիֆլիսի հայ թատրոնի պատմութեան հետ:

1904 թուի Ապրիլ 15ին Բաթումում վախճանուեց հասարակական այս գործիչը, բժշկուելու համար արտասահման մեկնելիս:

*

Երկաթէ բարակ սիւներով հիւսուած մեծ եւ զեղեցիկ մի վանդակապատ կայ Թիֆլիսի վանքի բակում: Ահա այդտեղ է հանդչում Աբգար Յովհաննիսեանը:

Նրա հողաբլուրի վրայ «Երախտապէտ հայ ժողովուրդը» կանգնեցրել է մի արձան: Դա սեւ — փայլուն, քառակուսի մարմար քարից կերտուած զեղեցիկ մի կոթող է: Ներքեւում հանդչում է մոխրագոյն կրանիտէ քարէ մի պատուանդան, որի վրայ հպարտ բարձրանում են սեւ փայլուն, մի ամբողջական մարմարից, քառակուսի ֆորմաներով կերտուած, երեք պատուանդան որոնց վրայ յաղթական իշխում է սեւ-փայլուն մարմարից կերտուած քառակուսի երկար մի սիւն:

Յուշարձանն իր ամբողջութեամբ պարզ, բայց զեղեցիկ մի ստեղծագործութիւն է, որն արտայայտում է թատրոնական հին գործչի եւ խմբագրի հաստատուն եւ վճռական կամքը, ծանր եւ խոհուն բնաւորութիւնը:

Երրորդ պատուանդանի արեւելեան ճակատին, ոսկեզօծ տառերով փորագրուած է.

ԱԲԳԱՐ
ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
1849—1904
ԵՐԱԽՏԱԳԷՏ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՑ

Պատուանդանի արեւմտեան կողմը, սեւ ֆօնի վրայ, ոսկեզօծ տառերով քանդակուած է.

ՏԱՂԱՆԴԱՒՈՐ
ԽՄԲԱԳԻՐ – ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՓՈՐՁ»Ի, «ԱՐՁԱԳԱՆԳ»Ի
«Armenische Bibliothek»Ի
ԵՒ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

ՊԵՏՐՈՍ ՍԻՄԷՕՆԵԱՆ
(1828—1911)

«Մեղուական» կուսակցութեան լաւագոյն դրօշակակիրը հանդիսացաւ Սիմէօնեանը, որի անունը սերտ կերպով կապուած է «Մեղու Հայաստանի» լրագրի հետ:

Ծնւում է եւ սնւում Նոր-Նախիջեւանում: Դօրպատի համալսարանը վերջացնելուց յետոյ վերադառնում է Թիֆլիս եւ նուիրւում ուսուցչութեան ու գրականութեան: Երկար տարիներ պաշտօնավարում է Ներսիսեան դպրոցում որպէս ուսուցիչ եւ տեսուչ:

1863 թուականից նշանակւում է «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագիր: Այդ պաշտօնը վարում է մինչեւ 1886 թուի վերջերը: Այդ ժամանակաշրջանում նա գաղափարական անողոք եւ անհաչտ պայքար է մղում Սա. Նազարեանի եւ Գրիգոր Արծրունու քարոզած սկզբունքների դէմ: Ամբողջ քառորդ դար, 25 երկար եւ ձիգ տարիներ, պայքարում է նա խմբագրական-հրապարակախօսական ճակատում, միշտ բարձր պահելով իր կուսակցութեան դրօշը:

*

1911 թուի Յունուարի 19ին, 81ամեայ հասակում, Թիֆլիսում ընդ միշտ փակեց իր աչքերն այս եռանդուն խմբագիրը:

Նրան թաղեցին վանքի եկեղեցու բակում, Մկրտիչ Սանասարեանի դամբարանին կից: Մեղուական կուսակցութեան համախոհները չի մոռացան իրենց մշակին եւ վրան կանգնեցրին մի յուշարձան:

*

Դա զեղեցիկ մի կոթող է:

Ներքեւում հանդչում է մոխրագոյն քարից յղկուած, քառակուսի, կէս մետր բարձրութեամբ կրանիտէ մի պատուանդան. վրան յաղթական բազմել է քառակուսի, հաստ, մի ամբողջական սեւ-փայլուն մարմարից կերտուած երկրորդ պատուանդանը, որի վրայ հպարտ իշխում է սեւ-փայլուն մարմարէ կլոր եւ երկար մի սիւն: Սիւնի ներքեւում, մուգ-կանանչագոյն կլոր շրջանակի մէջ, քանդակուած է Սիմէօնեանի կիսանդրին, որի տակ, պատուանդանի ճակատին, կարդում եմ ոսկեզօծ տառերով փորագրուած հետեւեալ տողերը.

ՊԵՏՐՈՍ
ՍԻՄԷՕՆԵԱՆՑ
1828—1911

Արեւմտեան կողմը ոսկեզօծ տառերով փորագրուած է.

ԽՄԲԱԳԻՐ
«ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ»
1861—1886

ԽՈՐԷՆ ԵՊ. ՍՏԵՓԱՆԷ
(1840—1900)

1865 թուի ապրիլին Թիֆլիսի լրագրական ասպարիզում հրապարակ եկաւ թարմ մտքերով, աղատամիտ հայեացքներով համակուած համալսարանական մի երիտասարդ եւ սկսեց խմբագրել «Հայկական աշխարհ» խորագրով մի նոր ամսագիր, որի դրօշի տակ համախմբուեցին ժամանակի առաջադէմ ձգտումներով տոգորուած երիտասարդները, բոլոր նրանք, որոնք պատկանում էին «Հիւսիսափայլ»ի դրօշին:

Շուտով ամսագիրը դարձաւ կենտրոնն այդ նոր հոսանքի:

Այդ թերթի խմբագիրն էր Ստեփան Ստեփանեանը, Մոսկուայի համալսարանի պատմա-լեզուագիտական բաժինն աւարտած մի երիտասարդ, որ յետագայում ստացաւ կրօնական կոչում:

Նա նշանակալից դեր է կատարում նաեւ մանկավարժական ճակատում: Նրա նախաձեռնութեամբ է, որ Թիֆլիսում հիմնում է ամենառաջին երկսեռ դպրոցը: Հալաբա-

© National Library of Armenia

րում բացուած Մարիամեան դպրոցը նրա յուշարձանն է:

Ուսանողական շրջանում նա մասնակցում է նաեւ Մոսկուայի թատրոնական շարժմանը: Նա առաջին դերասաններից մէկն է:

*

Գաբրիէլ Սունդուկեանի շիրմին կից կայ երկաթէ ծաղկահիւս փոքրիկ, բայց գեղեցիկ մի վանդակապատ, որի մէջ փայլում է թխագոյն քարէ պատուանդանի վրայ սեւ մարմարէ գեղեցիկ մի քար:

Դա Խորէն Ստեփանէի շիրիմն է:

Մարմարի վերին ճակատին քանդակուած է մի խաչ, իսկ ներքեւում ոսկեզօծ տառերով փորագրուած է.

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ
ԱԽԱԼՑԽԱՅԻ, ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ,
ԱՍՏՐԱԽԱՆԻ ԵՒ ԲԱԳՈՒԻ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՍԻՐԵԼԻ ՀՈՎԻՒ
ԵՒ ՔԱՐՈԶԻՉ
ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՍՏԵՓԱՆԷ
1840—1900

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊ. ՍԵԴՐԱԿԵԱՆ
(1855 1906)

Թիֆլիսի Վանքի եկեղեցու բակում, Սունդուկեանի շիրմին կից, կայ երկաթեայ ծաղկահիւս մի վանդակապատ, որի մէջ բարձրանում է երկու մետր բարձր, մի ամբողջական սեւ փայլուն մարմար քարից քանդակուած գեղեցիկ մի կոթող: Այդ քարի ներքոյ է հանգչում Արիս. Սեդրակեանը:

Ներքեւում մարմարէ քառակուսի պատուանդանն է, որի չորս ծայրին քանդակուած են չորս փոքրիկ սեւ մարմարէ սիւներ: Վրան հանգչում է մօտ մի մետր բարձր, գեղեցկահիւս քանդակներով կերտուած մարմարէ քառակուսի երկրորդ պատուանդանը, որի վերեւի ճակատը զարդարուած է մի մեծ խաչով, իսկ ներքեւում փորագրուած է.

ԱՐԻՍՏԱԿԷՍ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՍԵԴՐԱԿԵԱՆ
1855—1906

ԳԱԲՐԻԷԼ ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆ
(1812–1881)

Ո՞վ չի լսել ռուսաց մեծահռչակ առակախօս ԿՐԻԼՈՎԻ անունը: Նրա գեղարուեստական, կենդանի, պատկերաւոր առակները հռչակեցին հեղինակի անունը եւ անջինջ պահեցին գրականութեան պատմութեան մէջ:

Այդ առակները հարազատութեամբ թարգմանեց եւ նուիրեց հայ գրականութեան Գաբրիէլ եպ. Այվազեանը: Այդտեղ էլ կայանում է նրա հասարակական–գրական դերը:

Հայ լրագրութեան պատմութիւնն արձանագրողը պիտի յիշի նաեւ Գաբր. Այվազեանի անունն իբրեւ խմբագիր նախ «Բազմավէպ»ի (1848 թ.), ապա «Մասեաց Աղաւնի» թերթերի:

*

Ծնում է եւ սնւում Թէոդոսիայում: 1826 թուին մտնում է Վենետիկի Մխիթարեանների վանքը եւ 1834 թուին վարդապետ ձեռնադրւում: 1842 թ. Ալիշանի եւ Սուքիասեանի հետ հիմնում է «Բազմավէպ»ը: 1848 թուին Պարիզի Մուրադեան վարժարանին տեսուչ է նշանակւում: 1852 թուին Պարիզում հիմնում է Հայկազեան ուսումնարանը եւ հրատարակում «Մասեաց Աղաւնի»ն: 1855 թուին փոխում է դաւանանքը, անցնում Պոլիս, ապա՝ Ռուսաստան–Բեսարաբիա: Թէոդոսիայում հիմնում է Խալիբեան ուսումնարանը: 1874 թուին Գէորգեան Ճեմարանի տեսչի պաշտօնը ստանձնում:

*

Թիֆլիսի Վանքի Մայր եկեղեցում, Հասան Ջալալեանի գերեզմանին կից կանգնած է նրա յուշարձանը:

Թուխ–մոխրագոյն կրանիտէ երկար քարի վրայ հանգչում է ճարտարապետական գեղեցիկ ֆօրմաներով քանդակուած թուխ-սպիտակաւուն յաղթ մի պատուանդան: Վրան զարդարուած է սպիտակ մարմարով, որի վերեւի մասում քանդակուած են վարդապետական մի վեղար եւ խաչաձեւ գաւազան: Ներքեւում՝ մի աւետարան, որի վրայ փորագրուած է.

ՈՐՈՑ ԲԱՐԻՍ
ԳՈՐԾԵԱԼ
ԵՂԷ Ի ՅԱՐՈՒ
ԹԻՒՆ ԿԵՆԱՑ
ԵՒ ՈՐՈՑ ՁՉԱՐ
ԱՐԱՐԵԱԼ Ի
ՅԱՐՈՒԹԻՒՆ
ԴԱՏԱՍՏԱ
ՆԱՑ

Աւետարանի ներքեւում քանդակուած է ժապաւէնաձեւ, գեղեցիկ ծալքաւոր սպիտակ մարմարէ տախտակ, որի վրայ փորագրուած են այս տողերը.

ԳԱԲՐԻԷԼ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՅՎԱԶԵԱՆ
1812—1881

ԳՐԻԳՈՐ ԻԶՄԻՐԵԱՆ
(1819—1894)

50—60ական թուականների հասարակա-
կան այս գործիչն երկար տարիներ վարում է
Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնը, նշանա-
կւում Թիֆլիսի Ներսիսեան, Նորաշէնի, Մա-
րիամեան եւ այլ դպրոցների հոգաբարձու:
Ամենաբնորոշն այն է, որ երկար տարիներ
հովանաւորելով Թիֆլիսի հայ թատրոնը,
նպաստում է թատրոնական արուեստի զար-
գացմանը:

Նրա կինը՝ Սոֆիա Իզմիրեանը Թիֆլիսի հայ թատրոնի առաջին դերասանուհիներից է:

*

Թիֆլիսի Վանքի Մայր եկեղեցում հանգ-
չում է Իզմիրեանը: Քառորդ մետր բարձր
թուխ–մոխրագոյն պատուանդանի վրայ
հանգչում է կէս մետր բարձրութեամբ, սեւ
մարմարէ, քառակուսի ֆօրմաներով կեր-
տուած երկար մի քար, որի վերեւի ճակա-
տին քանդակուած է մի խաչ, իսկ ներքեւում
փորագրուած է.

ԳՐԻԳՈՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ԻԶՄԻՐԵԱՆՑ
1819—1894

Նոյնը քանդակուած է ռուսերէն:

ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ
(1818—1890)

Պատմաշրջանի կրթական հաստատու-
թիւնների պատմութեան մէջ Էրզրումի Սա-
նասարեան միջնակարգ դպրոցն ունի իր ու-
րոյն էջը:

*

Ահա այդ դպրոցի հիմնադրի, ռուսահայ
վաճառականի, յուշարձանն է կանգնած
Թիֆլիսի Վանքի Մայր եկեղեցու բակում,
Պետրոս Սիմէօնեանի շիրմի մօտ:

Գեղեցիկ մի կոթող է դա: Ներքեւում
իշխում է սպիտակ եւ քառակուսի մարմար
քարից կերտուած, մէկուկէս մետր բարձր,
մի պատուանդան, զարդարուած չորս մար-
մարէ սիւնով, որոնց վրայ հանգչում է եռան-
կիւնաձեւ գեղեցիկ մի գմբէթ, որի կատարին
իշխում է մարմար քարէ մի խաչ,

Գմբէթում գրաւում է ձեր ուշադրու-
թիւնը բրոնզից ձուլուած Սանասարեանի կի-
սանդրին:

Մարմարէ պատուանդանի արեւելեան ճակատին փորագրուած է.

ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍԵԱՆ
ՍԱՆԱՍԱՐԵԱՆ
1818—1890
ՀԻՄՆԱԴԻՐ
ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ
ՈՐ Ի ԿԱՐԻՆ
ՍԱՆԴԽՏԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ
Ի ՎԱՆ

Մարմարէ գմբէթի արեւմտեան կողմը քանդակուած է.

ՈՐ ՄԱՀԿԱՆԱՑՈՒ
ԾՆԵԱԼ ԱՆՄԱՀ
ԶԻՒՐՆ ՅԻՇԱՏԱԿ ԵԹՈՂ
ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ
ԳԻՐՔ ԳԼ. Գ.

ԻՇԽԱՆ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԲԷՀԲՈՒԴԵԱՆՑ
(1847—1907)

Իշխանական ծագում ունէր Բէհբու-
դեանը եւ օժտուած էր մտքի բաւականա-
չափ սրութեամբ, ինչպէս այդ վկայում է
Շիրվանզադէն իր «Կեանքի բովից» գրքում
(Բ. հատոր, էջ 167):

«Թիֆլիսկի վէստնիկ» — ահա այս լրա-
գրի հետ է կապուած իր ժամանակի յայտնի
այս հրապարակախօսի անունը: Իր ուղղու-
թեամբ այդ լրագիրը մօտենում էր «Մշակ»ին
եւ արձագանքում այն բոլոր հրատապ հար-
ցերը, որոնք յարուցւում էին եւ քննւում հայ
եւ վրացական լրագիրներում: Այդ գծով էլ
լրագիրը ռուս հասարակութեան ծանօթաց-
նում է հայ եւ վրացի ժողովուրդների կեան-
քում տեղի ունեցած հասարակական երեւոյթ-
ները:

*

Արդար Յովհաննիսեանի շիրմին կից
բարձրանում է գեղեցիկ մի կոթող: Դա Բէհ-
բուդեանցի յուշարձանն է:

Ներքեւում հանգչում է մոխրագոյն կրա-
նիտէ երկու քարից կերտուած պատուան-
դանը, որի վրայ բարձրացող սեւ փայլուն
մարմարից քանդակուած քառակուսի երեք
պատուանդանները վերջանում են սեւ մար-
մարէ մեծ խաչքարով: Կոթողն եռանկիւնա-
ձեւ, կլոր ֆօրմաներով աստիճանաբար բար-
ձրանում եւ կազմում է մի գեղեցիկ ամբող-
ջութիւն:

Սեւ մարմարէ երրորդ պատուանդանի արեւելեան ճակատին ոսկեզօծ տառերով փորագրուած է.

© National Library of Armenia

ԻՇԽԱՆ
ԿՈՍՏԱՆԴԻՆ
ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՆ
ԲԷՀԲՈՒԹԵԱՆՑ
1847—1907

Նոյնը ռուսերէն լեզուով քանդակուած է արեւմտեան ճակատին։

ՍՏԵՓԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Հասարակական գործիչ։ 1912—1913 թուականին Մոսկուայում հրատարակում է «Ճանապարհի վրայ» քաղաքական-հասարակական թերթը։ Մոսկուայում կազմակերպում է որբերի եւ գաղթականների հայկական ընկերութիւն եւ երկար տարիներ վարում նախագահի պաշտօնը։ 1919 թուին ընտրւում է Հայաստանի հանրապետութեան խորհրդարանի անդամ։ Թաղուած է Վանքի Մայր եկեղեցում։ Հողակոյտի վրայ ոչ քար կայ, ոչ էլ որեւէ արձանագրութիւն։

(Շարունակելի։) Ա. ԵՐԵՄԵԱՆ

ODULFUS VAN DER VAT P. DR. THEOL. O.F.M., Die Anfänge der Franziskanermissionen und ihre Weiterentwicklung im nahen Orient und in den mohammedanischen Ländern während des 13. Jahrhunderts. 8⁰, III—XI + 267, 1934. Franziskaner-Druckerei, Werl i. Westf.

Սոյն գրութիւնը 5 գլուխներու մէջ կը պարզէ Փրանկիսկեաններու առաքելական գործունէութիւնը ԺԳ. դարուն մերձակայ արեւելքի եւ մահմետական երկիրներու մէջ։

Աշխատասիրութեանս մէջ հիւսուած փոքրիկ հատուածը «Փրանկիսկեանները Հայաստանի մէջ» բաւական եղաւ հետաքրքրական ակնարկով մը թերթելու գործը։

Առաջին գլուխը (1—38) նիւթ ունի ընդհանրապէս Փրանկիսկեան առաքելութեան ծագումը, մղիչ ոյժը եւ նպատակը. իսկ յաջորդ գլուխներու մէջ խիստ քննադատական աչքով եւ պատմական լոյսի տակ կը մերձենայ հեղինակը յառաջադիմ նիւթին եւ փայփայուած աւանդութիւններու վրայ միայն հաւանականութեան եւ նոյն իսկ ոչ իրականութեան կնիքը կը դրոշմէ։

Գրութեանս մէջ կը հանդիպինք՝ հոգիներու փրկութեան գործին նուիրուած, գաղափարականով տարուած եւ գաղափարականով տոչորող անձինքներու, որոնք իրականութեան եւ արդելքներու վրայէն կը թռչին։ Գիսաւոր աստղերու նման Փրանկիսկեան ասպետները մերձակայ արեւելքի հորիզոնը, Սիւրիա, Հայաստան, Վրաստան, Թաթարիստան, մինչեւ Եգիպտոս պահ մը լուսաւորելէ ետք կ'ոչնչանան, կ'անհետանան, կը մարտիրոսանան։

Որով չնչին արդիւնք յառաջ կը բերէ այս շրջանի առաքելական գործունէութիւնը։ Եթէ նկատի առնենք առաքեալներու նուազ պատրաստութիւնը եւ ուրիշ ներքին ու արտաքին արգելքներ, ոչ միայն հասկնալի, այլ նաեւ քիչ մըն ալ բնական կը դտնենք — հակառակ դիւցազնական եւ մարտիրոսական ճիգերու — ձեռք բերուած նուազ արդիւնքը։ Արդիւնք մը սակայն որ գործնականին անհրաժեշտ կամուրջը պէտք է նկատել անդրադարձն փորձերու եւ յաջողութիւններու։

Հեղինակը 117—123 էջերու մէջ խտացուցած է ինչ որ մեր պատմական Հայաստանի հետ կապ ունի։ Սոյն էջերը միայն կը թարգմանենք։ Աղբիւրները եւ ծանօթութիւնները տես անդ էջ 117—123։

«Փրանկիսկեաններու դէպի Փոքր Հայաստան ըրած առաջին քայլին մասին խօսող մատենագրութիւնը զմեզ անորոշութեան մէջ կը թողու։ Հոլցապֆէլ (Holzapfel) այս առաջին շարժումը այն եղբայրներու կը վերագրէ, որոնք 1247ին քահանայապետական նուիրակին Անդրէաս Պերուճիայի (Perugia) ընկերանալով Հայաստան եկած էին. ենթադրութիւն մը, որ փաստէ զուրկ է։ Աւելի հաւանական կրնայ համարուիլ Գոլուբովիչի (Golubovich) կարծիքը, թէ մօտ 1270ին արդէն Հայաստանի մէջ Տարսոսեան հսկիչներ կային, Ս. Երկրի ազդեցութեան տակ, եւ 3 վանքեր ունէին։ Այս կարծիքը կը հիմնուի Հունգարական Հաստատութիւններու Շարքին վրայ (Series provinciarum Hungarica), ուր 34 ծանօթ վանական կայաններէ դատ կը յիշուին 3 տուներ։ Սակայն իբր բացարձակ ստոյգ պէտք է նկատել որ հոս ոչ թէ Կիլիկեան Տարսոն նաւահանգիստ քաղաքը կամ Փոքր Հայաստանի պետութիւնը կ'իմացուի, այլ Թաթարիստան եւ Թաթարներու պետութիւնը, երկիր մը որ այն ժամանակ ստէպ Տարսիս (Tarsis) կոչուած է։ Նոր ենթադրութիւններու առիթ տուած է Գլասբէրգէրի (Glaßberger) ժամանակագրութեան մէկ տեղիքը, ուր Փրանկիսկեաններու Սեբաստիա — հայկական սահմանին ամենակարեւոր վաճառականական քաղաքներէն մէյն մէջ — վանք հիմնելը՝ Մարկոս Մոնտէֆէլտրոյի (Montefeltro) կը վերագրուի։ Այս տեղիքը եւ յիշեալ Փրանկիսկերուի։ Այս տեղիքը եւ յիշեալ Փրանկիսկեանի մասին ուրիշ ծանօթութիւններ համեմատելով, Գոլուբովիչ ստիպուած կը տեսնէ Սեբաստիոյ՝ Փրանկիսկեան վանքին շինութիւնը 1279ին դնելու։ Թէ ինչքան անհաւանական է այս՝ պիտի տեսնենք, որովհետեւ Մարկոս Մոնտէֆէլտրո իր Սալիմբէնէ (Salimbene) մտերիմ բարեկամին վկայութեան համեմատ, ինքզինքը 1248 տարուան արդէն «տարիքով յառաջացած կը նկատէր» եւ իրապէս 1284ին շատ խոր ծերութեան մէջ վախճանած է։ Բաց ասոր Սալիմբէնէի կենսագրութեան մէջ, ուր Մարկոս բարեկամին կեանքը կը նկարագրուի, այսպիսի ճամբորդութեան մը յիշատակութիւն չկայ 1279էն ոչ յառաջ եւ ոչ ետքը։ Միւս կողմանէ կարելի է դիւրաւ մեկնել, թէ ինչպէս Գլասբէրգէր կրնար Մարկոս Մոնտէֆէլտրոն Սեբաստիոյ վանքին հիմնադիր համարիլ։

Վանական ժողով մը 1292ին կ'որոշէր, որ ապագային Հայաստան Ս. Երկրի դաւառապետին ենթարկուի, սակայն ժողովը այս որոշումէն յայտնապէս ազատ կը կացուցանէ Սեբաստիոյ վանքը, ուր կը յիշուի «որ եղբայր Մարկոս ժամանակէ մ'իվեր շինել սկսած է»։ Այս Գլասբէրգէր բառացի յառաջ կը բերէ, յիշեալ Մարկոս անունը Մարկոս Մոնտէֆէլտրոյին հետ նոյնացնելով։ Բայց քիչ ետք պիտի տեսնենք, որ ժողովի որոշման մէջ ուրիշ Մարկոսի վրայ է խօսքը, որ տասնեակ տարի ետք դեռ նոր Հայաստան կուգայ։

Մեր կարծիքը հաստատելու համար, թէ 1279ին դեռ Հայաստանի մէջ Փրանկիսկեան հաստատութիւն մը գոյութիւն չունէր, կրնանք վերջ ի վերջոյ Բուրհարդ (Burchard) Դոմինիկեան առաքելին ճամբորդական տեղեկութիւններն մատնանշել։ Դոմինիկեան հայրը 1283 թուականին, որչափ բոլոր երեւոյթները կը ցուցնեն, Հայաստանի մէջ լատին կրօնաւորներու չէ հանդիպած։

1289 թուականին վերջերը Հայոց Հեթում Բ. թագաւորը հաւանաբար Յովհաննէս Մոնտէկորվինոյէն (Montecorvino) առ այն դրդուած Kaimund Gaufredi, վանքի ընդհանուր առաջնորդէն, իր երկրին համար քանի մը եղբայրներ կը խնդրէ։ Gaufredi սիրայօժար՝ այս նպատակին համար հինգ հայրեր կ'որոշէ՝ Liberatus, Angelus, Clarenus, Markus von Montelupone, Thomas եւ Angelus von Tolentino։ Այս հինգ եղբայրներն առաջին Փրանկիսկեաններն են, որոնք մշտատեւ փոքր Հայաստան հաստատուած են։ Երբ 1290ին Հայաստան կը հասնին, իրենց առաքելական կենցաղավարութեամբ շուտով թաղաւորին եւ պետութեան մեծամեծներուն յարգանքն ու սէրը կը գրաւեն։ Այնքան կը գրաւուի Հեթում, որ կ'որոշէ քաջուիլ պետական գործերէ եւ միանալ եղբայրներու հետ։

Սիս արքայանիստը հաւանականաբար եղբայրներու բնակավայրն էր։ Markus von Montelupone Հայաստանի մէջ ունեցած դեղեցիկ յաջողութիւններէն քաջալերուած՝ Սեբաստիա վաճառականական քաղաքի մէջ վանքի մը շինութեան կը ձեռնարկէ։

Ակկոնի անկումէն ետք հայկական փոքրիկ պետութիւնը Սարակինոսներու առջեւ անպաշտպան էր։ Թագաւորն որոշեց քրիստոնեայ Եւրոպայի օգնութեան դիմել։ Իրապէս Հեթում 15 Յուլիս 1291ին Թովմաս Տոլէնտինօ (Tolentino) եւ Մարկոս Մոնտէլուպօնէ քանի մը հայ իշխաններու ընկերակցութեամբ Քահանայապետին, ինչպէս նաեւ Գաղղիոյ եւ Անգղիոյ արքունիքը կը դրկէ։ Գաղղիա եւ Անգղիա մեկնող պատգամաւորութեան ձեռքը Նիկողայոս Դ. քահանայապետի յանձնարարական գրութիւններն 23 Յունուար 1292 թուականներն կը կրեն։

Պարիսի Փրանկիսկեան վանքի ընդհանուր ժողովի մէջ կը հանդիպինք այս պատգամաւորութեան։

Հոն հայ պարոններն, իրենց թագաւորին շնորհակալութիւնը կը յայտնեն ընդհանուր առաջնորդին, որ այնպիսի ճարտար եւ բարի եղբայրներ դրկած է իրենց երկիրը։

Հայ պատգամաւորութեան եւ երկու առաքեալներու, ի մասնաւորի Մարկոս Մոնտէլուպօնէի ներկայութիւնը շատ կը նպաստէ Սեբաստիա վաճառականական քաղաքի մէջ վանքի մը շինութեան կը ձեռնարկէ։

Ակկոնի անկումէն ետք հայկական փոքրիկ պետութիւնը Սարակինոսներու առջեւ անպաշտպան էր։ Թագաւորն որոշեց քրիստոնեայ Եւրոպայի օգնութեան դիմել։ Իրապէս Հեթում 15 Յուլիս 1291ին Թովմաս Տոլէնտինօ (Tolentino) եւ Մարկոս Մոնտէլուպօնէ քանի մը հայ իշխաններու ընկերակցութեամբ Քահանայապետին, ինչպէս նաեւ Գաղղիոյ եւ Անգղիոյ արքունիքը կը դրկէ։ Գաղղիա եւ Անգղիա մեկնող պատգամաւորութեան ձեռքը Նիկողայոս Դ. քահանայապետի յանձնարարական գրութիւններն 23 Յունուար 1292 թուականներն կը կրեն։

Պարիսի Փրանկիսկեան վանքի ընդհանուր ժողովի մէջ կը հանդիպինք այս պատգամաւորութեան։

Հոն հայ պարոններն, իրենց թագաւորին շնորհակալութիւնը կը յայտնեն ընդհանուր առաջնորդին, որ այնպիսի ճարտար եւ բարի եղբայրներ դրկած է իրենց երկիրը։

Հայ պատգամաւորութեան եւ երկու առաքեալներու, ի մասնաւորի Մարկոս Մոնտէլուպօնէի ներկայութիւնը շատ կը նպաստէ Հայաստանի Փրանկիսկեաններուն եւ Ս. Երկրի առաջնորդին յարաբերութիւններն պայծառացնելու։ Կիլիկիայի հայրերու առաքելութիւնը մինչեւ այն ժամանակ ըստ երեւոյթին ինք իր մէջ առանձին խումբ մը կազմած էր՝ անմիջնորդական կախում ունենալով վանքի առաջնորդէն. հիմայ այս ժողովով Ս. Երկրի կը ստորադասուէր։ Այս էր տուեալ լուծումը, որուն Թովմաս եւ Մարկոս հակա-

© National Library of Armenia